



92. ԱՍԼԱՆՆ ՈՒ ՄՈՒԿԸ

Ասլանը քնած ա ինրմ: Ըշտեղան-շտեղ մին մուկը կալիս ա, պըց-ըանըմ ասլանի փորին, ըսկսըմ վազ-վազ անիլը: Ասլանը բոլորդան զանթնըմ ա, թնթը մեկնըմ ու մըկանը փըռնըմ: Հեխճ ու կրակը լիւզիւ յա առնըմ ըսկսըմ ըղաչանք անիլը:

—Թա սըրտըմըտ հեխճի թիքա կա, ինձ պա՛ց տուկիր: Թա ուտես էլ, մին ա, ո՛չ աչկըտ ա պան տեսնալու, ո՛չ էլ փորըտ ա պան քինալու: Համա որ պա՛ց թողաս, ես էլ հեխճ ունեմ, մին օր քեզ քոմագ կանեմ, լավութիւնիտ տակիցը տո՛ւս կըկամ:

Ասլանը ծիծաղըմ ա, որ մուկն էլ ա հեխճմըտանքից խոսըմ, պա՛ց ա թողըմ:

Մին անքամ էլ ոնց ա ինրմ, ավչիքը ասլանին փըռնըմ են, քանդիրով պինդ կըպկըպորըմ ծառիցը: Մուկը էս որ տենըմ ա, որ լսըմ ա քոլի թաքավորի տնքոցը, ճըռռոցը, վազ ա տալիս կուչտը, քանդիրը կըռծըմ, եսիրութունից ազաղըմ:

—Ասլա՛ն ապեր, մի՞տըտ ա, որ իզ վրա ծիծաղըմ իր, վըհատըմ չիր, որ ես էլ կարամ լավութիւնիտ փոխը ետ տամ: Մ՛հի վհատացի՞ր...

